

ԵՆՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԻ
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԿԱՐՆՈՑ

1893 - 1894 ՏԱՐԻՈՑ

361



Մ Ա Տ Ո Ւ Ց Ե Ա Լ

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻ Գ. Գ. ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ

ՆԱԽԱԳԱՀ


ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԻՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՀԱԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

1895





ՍԱՆՍՏԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԿԱՐԻՆ

ԳԻՒԱՆ ՇՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 432/48



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հա՛յր Նախագահ Խնամակալութեան Սանատարեան Վարժարանի Կարնոյ Կ. Պոլիս

Հոգարարձութիւնն պատիւ ունի մատուցանել Պատկ. Խնամակալութեանդ Վարժարանիս 1893-94 Դպրոցական տարուան Ելմտական Տեղեկագիրը և Տեսչութեան կողմէ ներկայացուած նոյն տարուան Ուսումնական Տեղեկագիրը:

Ելմտական Տեղեկագրոյս յարակից մտից և ելից մանրամասն հաշուեցուցակներէն Պատկ. Խնամակալութիւնդ պիտի տեսնէ որ Վարժարանիս Սրկղը նոյն տարուան մէջ 84212 $\frac{1}{4}$ ՂՐՂԻ բացմը ունեցած է, որոյ պատճառներու մասին պիտի խօսիմք 'ի կարգին; հարկ եղած բացատրութիւնները տալով ելից և մտից մէն մի գլխի մասին, ուր որ պէտքն է:

Մտից 2 բոգ Գլխոյն իրական հասոյթի նախատեսեալէն ունեցած տարբերութեան պատճառն այն է որ Հոգարարձութիւնս 10 աշակերտ նկատած է իբր մասնակցող արձակուրդի ծախուց, որուն սակայն իրապէս 16 աշակերտ մասնակցեր են նոր թոշակաւորներէն:

3 բոգ Գլխոյն մէջ նախատեսուած գումար չկայ, սակայն ի վերջոյ հարկ տեսնուեր է հին մահճակալ մը ծախել 51 $\frac{1}{2}$ ՂՐՂԻ, որ իրական մտից կողմը նշանակուեր է:

Թ բոգ Գլխոյն մէջ նշանակուած Վարճարար ծառայու-

Թիւն» ըսուածը այն դումարն է , զոր վարժարանիս մէջ բնակող երկու տեսուչք կը հատուցանեն վարժարանին արկեղձ 'ի փոխարէն պատահական ծառայութեանց սպասաւորի մը , որ անոնց կ'ծառայէ :

10 ըդ. Գլխոյն մէջ իրականապէս մուտք դրուած վաճառեալ ուտեստը կրաղկանայ ծախուած ալիւրի թէփէն , հացի մանրութէն , և փուռին մէջ այլոց համար եփուած հացի հասւյթէն :

11 ըդ. Գլխոյն մէջ իրական մուտք չկայ այն պատճառով որ հնոտի զգեստ չէ ծախուած և ամենը մէկտեղ պիտի ծախուի յաջորդ տարին :

13 ըդ. Գլխոյն մէջ իրական մուտք չէ դրուած թէև , բայց 'ի տեղեկութիւն հարկի կսեպեմք յայտնել թէ 151 $\frac{3}{4}$ զրշի մծա դեղ վաճառուեր է , սակայն հարկ չէ տեսնուեր մուտք նշանակել , այլ այդ դումարը զեղչուած է դեղօրէից համար եղած ծախուց դումարէն :

15 ըդ. Գլխոյն մէջ նշանակուած 52 $\frac{1}{2}$ զրշի դումարը քարիւղի վաճառեալ թիթեղներու արժէքը կ'կազմէ :

18 ըդ. Գլխոյն Բ. բաժնին մէջ ջութակահարաց վճարքը իրականին մէջ նախատեսեալէն շատ պակաս կը տեսնուի , պատճառն այն է որ 18 ջութակահար աշակերտ երեակայուեր է 'ի սկզբան , և ապա միմիայն 10 աշակերտ ջութակի դասին մասնակցեր են , որոց 9 ը վճարեր են իրենց տուրքը և միայն մէկը անվճար թողուցեր է իր պարտքը : Չվճարողներու մասին պիտի խօսիմք 22 ըդ. Գլխոյն մէջ :

19 ըդ. Գլխոյն մէջ 44 զրշի իրական մուտք մը կտեսնուի որ դուրսէն եղած ապսպրանքի մը արժէքն է : Պէտք է սակայն գիտնալ որ վարժարանիս բոլոր զրքերը իր մէջ կը կազմուին , որոց համար տեղի ունեցած ծախքը կը տեսնուի ելից կողմը պատկանեալ գլխոյն մէջ և սակայն հարկ չէ տեսնուած կազմուած գրքերու կազմի արժէքն ալ մուտք նշանակել :

20 ըդ. Գլխոյն Ա. մասին մէջ նախատեսեալ և իրական դումարներու տարբերութեան պատճառն այն է որ երկաթագործութեան արհեստին մասնակցող 10 աշակերտ երեակայուեր է և 7 աշակերտ միայն հետեւեր են , որոց երկուքն ալ անվճար

Թողուցեր են իրենց տուրքը : Բ . մասին մէջ իրական գումարին նախատեսեալէն աւելի լինելու պատճառն է 5 աշակերտ միայն նկատուած և 7 աշակերտ հիւանութեան մասնակցած և վճարքն ալ ամբողջովին գանձուած ըլլալը : Իսկ վաճառեալ արտադրութեանց գումարը նախատեսեալէն շատ նուազ ըլլալուն պատճառըն է արհեստական արտադրութեանց նուազ ըլլալը , զի վարժարանիս Արհեստանոցը տակաւին չէ մտած այն վիճակին մէջ , որ կարենայ բաղմաթիւ արտադրութիւն յառաջ բերել : Աշակերտք արդէն արհեստական դասերով , այսինքն ձեւեր պատրաստելով կըրարդին և այս պարագային աւելի նիւթ փճացնելու պարտաւոր են քան բան մը արտադրելու , գուրքէն ալ արհեստաւոր աշակերտ հազիւ քանի մը հաս կան , իսկ վարպետները առանձինն չեն կրնար պահանջուածին չափ արտադրութիւն յառաջ բերել :

21 ըդ գլխոյն իրական և նախատեսեալ գումարներու ահագին տարբերութիւնը իր յայտնի պատճառներն ունի : 3561 զրշի իրական գումարը կը կազմեն քաղաքիս մէջ եղող արտերուն վարձքը 1545 զրշ - և պատրաստի երեք սօմար ծախուած ցորենի արժէքը 2016 զրշ - իսկ մնացեալը Ազգերանի կալուածէն ակընկալեալ հասոյթի գումարը պիտի կաղմէր , որ սակայն անցաւ ամբողջովին Լազերուն ձեռքը , որոնք տակաւին ցայսօր տիրեր են այդ կալուածին և հանգիստ սրտով կ'վարեն ու կ'ցանեն զայն , ինչպէս այս մասին ընդարձակ տեղեկագրերով հարկ եղած տեղեկութիւնները տրուած են Պատկ . Խնամակալութեանդ :

22 ըդ Գլխոյն Ա . մասին մէջ նախատեսուած և իրական գումարներու տարբերութիւնը յառաջ կուգայ ընդ ամենը 65 թոշակաւոր աշակերտ երեւակայուած և 51 աշակերտ միայն վըճարող լինելէն , որոցմէ 47 միայն հատուցեր են իրենց թոշակները և երկու ոսկի ալ առ հաշիւ գանձուած է : Իսկ Բ . մասին գումարներուն մէջ եղող տարբերութեան պատճառն այն է որ 13 նորեկ աշակերտ երեւակայուած է , բայց 8 նորեկներէ մուտքի վճար գանձուած է : Թէև նորեկները 13 եղած են , սակայն անոնցմէ 3 ը վարժարանիս նախկին աշակերտներէն լինելով , և համաճարակի պատճառաւ վարժարան վերադառնալ չկրնալով ,

բատ կանոնի ազատ մնացած են մուտքի վրճարքէ, Աշակերտաց թոշակի Գլուխը առիթ կուտայ մեզ յայտնել մեր վիշտը այն ծնողաց մասին, որք տակաւին չեն հաճած վճարել իրենց դասակաց թոշակները: Հոգաբարձութիւնս թէև հարկ եղած ամեն մեղմ կամ խիստ միջոցները ի դործ դրաւ դանձելու այդ անվճար պահանջները, սակայն ցաւ է ըսել թէ իւր այս ձեռնարկներուն մէջ ապարդիւն մնաց և հետևաբար այդ կարգի ծնողք խիղճ չեն ըներ շարունակելու ցարդ իրենց անտարբերութիւնն դէպի այդ պարտուց վճարումը, և այդու վարժարանիս արկղը այսօր կարևոր դումար մը պահանջ կը ներկայացնէ, որոյ մասին հարկ եղած ազդու տնօրինութիւնը կ'իթողու՞մք Պատկ. Խնամակալութեանդ:

23 ըդ Գլխոյն մէջ տեսնուած բացին մեծ տարբերութեան պատճառ են աշակերտաց թոշակին ենթադրուածէն շատ նուազ լինելը, հացի մեծ սղութիւնը և Աղվերանի ամսողջ հասողթին Լազերուն ձեռք անցնիլը: Ասոնք այնպիսի պատճառներ են, որք ինչպէս յայտնի է, բոլորովին անկախ են Հոգաբարձութեանս կամքէն և որոց առջևն կարենալ առնելու համար ոչ մէկ միջոց չկար Հոգաբարձութեանս ձեռքը:

Դրամարկղի այդ բացը դոցուած է՝ Կտակակատար Վսեմ. Պ. Եղեանցի ձեռքով վարժարանի պահեստի դումարէն:

Անցնինք քննել ելից Գլուխներու դումարները:

2 ըդ Գլխոյն Դ ըդ. մասի դումարներուն մէջ տեսնուած տարբերութեան պատճառն այն է որ աշակերտք վարժարանի վարչութեանէն անկախ պատճառներով չլրցան օդափոխութեան երթալ, որով երևակայուած ծախքնալ տեղի չունեցաւ:

4 ըդ Գլխոյն Լ. մասին մէջ իրական դումարը թէև աշակերտաց թուոյն բաղդատմամբ շատ եղած է, սակայն դասական առարկայներ բոլորովին սպառած լինելով, մեծ քանակութեամբ դնուած են ու պիտի բաւեն նաև յաջորդ տարւոյ համար:

7 ըդ Գլխոյն մէջ նախատեսեալ և իրական դումարներուն տարբերութիւնը յառաջ եկած է վարժարանական ծանուցմանց համար ոմանց լրագրաց եղած վճարումներէն, որք առաջին անգամ տեղի կունենային, Այնթապցի Հայկաբան ուսուցչին և

Պատրիարքարանի հետ փոխանակուած տասնեակ հեռագրերէն և նաև չվճարող ծնողաց ուղղուած բազմաթիւ նամակներէն :

8 րդ. Գլխոյն մէջ հայկարան ուսուցչի մասին նշանակուած գումարներու մէջ եղած տարբերութիւնը անոր համար է որ 10 ոսկի ամսաթոշակ երեակայուեր է և ապա 7 ոսկի ամսաթոշակ տրուեր է 10 ամիս միայն՝ տասը ոսկի ճանապարհածախսով մէկտեղ : Գաղղիարան ուսուցչի մասին եղող գումարներու տարբերութիւնն է որոշուած 10 ոսկի ամսաթոշակէն զատ 15 ոսկւոյ ճանապարհածախս վճարուած ըլլալը : Տաճկարան ուսուցչի համար նշանակուած գումարներու տարբերութեան պատճառն այն է որ ի սկզբան 6 ոսկի ամսաթոշակ երեակայուեր է և ապա 8 ոսկի վճարել հարկ տեսնուեր է՝ հանդերձ $520 \frac{3}{4}$ դրշ ճանապարհի և փոսթայի ծախսով :

Իսկ օգնական չորս ուսուցչաց համար նշանակուած գումարներու տարբերութիւնը այն պատճառաւ է որ անոնցմէ միայն մին Գ. Ղոյլնեան պահուած է և միւսներուն պաշտօնը յանձնուած Գ. Ճիկէրճեան և Ս. Աղապալեանի, որոց արտասահման (Ռէյթմէրդ) երթալը մի տարի ևս յետաձգուեցաւ և որոց ամսաթոշակը կվճարեր Պ. Եղեանց Եւրոպայի մէջ կրթութիւն սաներու յատկացեալ հասոյթէն :

10 րդ. Գլխոյն մէջ նշանակեալ ուսեւեաց ծախքերը ընդհանրապէս իրականին մէջ պակաս եղած են՝ ոչ թէ կերակուրի մասին խնայողութիւն եղած ըլլալուն, այլ աշակերտաց թիւը երեակայուածէն նուազ լինելուն պատճառաւ, իսկ հացի արժէքը նախատեսուածէն շատ աւելի ըլլալուն պատճառը միմիայն արմտեաց ծանօթ սղութիւնն է :

11 րդ. Գլխոյն ընդհանուր գումարին մէջ իրականին նուազ լինելու պատճառն է աշակերտաց թուոյն նուազ լինելը : Իսկ մասնաւոր գումարներուն ոմանց մէջ իրական ծախուց շատ լինելը պատճառն է նախատեսեալին մէջ նուազ երեակայուած ըլլալը :

12 րդ. Գլխոյն մէջ ևս իրական ծախուց նուազ լինելու պատճառն է աշակերտաց թուոյն նուազ լինելը :

13 րդ. Գլխու գումարներուն Ա. մասին մէջ նշանակուած

իրական ծախուց պակաս ըլլալու պատճառն է վարժարանին երկրորդ կիսամեկին այցելու բժիշկ չունենալը՝ առ ՚ի չգոյէ լուսագունին և հետևաբար նոյն պատճառով ալ երկրորդ մասին մէջ իրական գումարը աւելի եղած է. իսկ Դ.րդ մասին մէջ ծախուց նուազումը ցոյց կուտայ թէ վարժարանը քիչ հիւանդ ունեցեր է և հետևաբար քիչ դեղ սպառեր:

1 1/2 րդ Գլխոյն Բ. մասին մէջ իրական գումարին շատութիւնը այն պատճառաւ է որ վարժարանին համար Ռուսական ոճով փէճեր (վառարան) շինուած են, որք թէ՛ խնայողական են և թէ՛ մանաւանդ միօրինակ և տեական ջերմութեան մէջ կը պահեն դասարանները և ննջարանները:

20 րդ գլխոյն մէջ արհեստագետաց յատուկ իրական գումարին մէջ նախատեսուածէն 218 զրշի յաւելումը դուրսի համար արհեստանոցը պատրաստուած առարկայներու գնէն ուսուցչաց յատկացուած շահաբաժինն է: Իսկ նոյն գլխոյն Ե. մասին մէջ իրական ծախուց շատութեան պատճառն է արհեստաւոր աշակերտաց դործաւորի շապիկ շինուած և դուրսի բանւորի օրական վճարք արուած ըլլալը:

21 րդ Գլխոյն մէջ սերմնցուի համար նշանակուած իրականին նախատեսուածէն աւելի ըլլալը արմտեաց սղութեան պատճառաւ է, և սակայն այդ գումարով գնուած սերմը և ասոր արտադրած ամսողջ հասոյթը անցան Աղվերանի նախկին սեփականատէր Լազերուն ձեռքը և անոնցմէ ոչինչ չկրցաւ ձեռք բերել վարժարանը, ինչպէս խօսուած է այս մասին մտից միևնոյն գլխին մէջ:

Իսկ 23 րդ Գլխոյն մէջ նշանակուած իրական ծախուց առաւելութեան պատճառն այն է որ Աղվերանի կալուածոց բռնարարման դէմ դատ բանալու համար վարժարանը պարտաւորուեր է դուրսէն յատուկ փաստաբան վարձել և դատական զանազան ծախքեր վճարել: Նոյնպէս արհեստանոցի նախկին աշակերտ Իլէեան Մկրտչի դատին համար դատական ծախքեր և դուրսէն բռնուած փաստաբանի վարձք վճարած է, ինչպէս նաև 4 աշակերտ իրենց տեղերը ճամբած ըլլալուն համար ստիպուեր է անոնց ճանապարհածախսն ևս վճարել: Անոնցմէ դուրս

ստիպողական պէտքերու համար փոխ առնուած ստակին 11 ոսկի տոկոս վճարեր է :

Ըստ համեմատական ցուցակին՝ իւրաքանչիւր աշակերտի համար վարժարանը ծախք ըրած է իբր կրկինն այն գումարին զոր թոշակաւոր աշակերտք իբր տարեթոշակ կվճարեն վարժարանին : Ատոր բնական հետեանքը այն պիտի լինէր որ աշակերտաց կողմէ վճարելի տարեթոշակի գումարը աւելի մեծնար սակայն Հոգարարձութիւնս յոյս մեծ ունի որ աշակերտաց թուոյն աճմամբ այդ տարրերութիւնը հետզհետէ պիտի նուազի և հաւասարակշռութիւն գոյանայ աշակերտաց վճարքի և նոցա վրայ եղած ծախուց մէջ :


22 Յուլիս 1895


Մնամք Ամեն . Ս . Հօրդ խորին յարգանքք խ . Որդիք

դ իմաց Հոգարարձութեան
անդամսեսչութեան
ԳԷՈՐԳ ԱՐՈՒԼԵԱՆ

Առաջնօրդ Կարնոյ եւ յարակից
վիճակացն եւ Նախագահ Հոգր .
Սան . վարժարանին
ՂԵՒՈՆԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
ՇԻՇՄԱՆԵԱՆ

Բարսուդար ՄԻՀՐԱՆ Մ . ՉՈՒԽԱՃԵԱՆ .





1893-94

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Ելեմատացոյցով նախատեսուած եւ իրապէս եղած

Մ Յ Պ Յ

	ՆԱՍԵՆՍԵԱՎ ՄՈՒՏՔ		ԻՐԱՊԱՆ ՄՈՒՏՔ	
	օսմ. յր. 108 կճ		օսմ. յր. 108 կճ	
1. Հոգեւոյս Հիմնադիր	—	123,600	—	123,600
2. Վարժարան				
Օղակոխութիւն	—	2060	—	3296
3. Ննջարան	—	—	—	51 $\frac{1}{2}$
4. Դասարան-Մարզն.	—	—	—	—
5. Ճաշարան-Խոհանոց	—	—	—	—
6. Կրօնական	—	—	—	—
7. Պատեօնական	—	—	—	—
8. Թոշակի ուսուցչաց	—	—	—	—
9. Վարձի Սպասաւորաց				
Վաճառեալ ծառայութիւն	—	618	—	618
10. Ուսելիք-Ըմպելիք				
Վաճառեալ Ուստեստ	—	1030	—	1273 $\frac{1}{4}$
11. Զգեստ-Կօշիկի				
Վաճառեալ Զգեստք	—	515	—	—
12. Մաքրութ. Աւակերաց	—	—	—	—
13. Հիւանդանոց	—	257 $\frac{1}{2}$	—	—
14. Վառելիք	—	—	—	—
15. Լոյս	—	51 $\frac{1}{2}$	—	52 $\frac{1}{2}$
փոխադրելի	—	128,132	—	128,891 $\frac{1}{4}$

	ՆԱԽԱՆՆԵՄԱ		ԻՐԱՊԱՆ	
	օսմ. յրշ. 103 հմ		օսմ. յրշ. 103 հմ.	
փոխադրեալ	—	128132	—	128,891 ¹ / ₄
16. Գրադարան	—	—	—	—
17. Թանգարան	—	—	—	—
18. Երաժշտարան				
ա. Դաշնակահարք	3605		3605	
բ. Ջութակահարք	9270	12875	4635	8240
19. Կազմարան	—	—	—	44
20. Արհեստանոց				
ա. Երկամագործ	5450		2575	
բ. Հիւսն	2575		3605	
գ. Վաճառեալք	5450	12875	1592 ³ / ₄	7772 ³ / ₄
21. Կալուածք	—	13450	—	3561
22. Ասակերտք				
ա. Թոշակք	133,900		97,026	
բ. Նորեկներու մուտք	7725	141,625	4120	101,146
23. Արտակարգ	—	19158	—	84212 ¹ / ₄
				<u>333,867¹/₄</u>

1893-94

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Ելեմսացոյցով նախատեսուած եւ իրապէս եղած

ԵԼԵՑ

	ՆԱԽԱՏԵՍԵՄԱ ԵԼՔ		ԻՐԱՊԱՆ ԵԼՔ	
	օտմ. յրշ. 108 հն.		օտմ. յրշ. 108 հն.	
1 Հոգեւոյս Հիմնադիր	—	—	—	—
2 Վարժարան				
ա. Շէնքի վարձք	10300		10300	
բ. Պահպանութիւն	5130		5588	
գ. Կահաւորութիւն	1030		262½	
դ. Օղափոխութիւն	3605	20085	56½	16207
3 Ննջարան				
ա. Պահպանութիւն	515		296½	
բ. Կահաւորութիւն	515	1030	—	296½
4 Դասարան-Մարզարան				
ա. Դպրոցական պիտոյք	2575		3207½	
բ. Դասագիրք	515	3090	178½	3386
5 Ճաւարան-Խոհանոց				
ա. Պահպանութիւն	1030		744¾	
բ. Կահաւորութիւն	515	1545	235½	980
6 Կօնական	—	618	—	611¾
7 Պատճօնական				
ա. Բարտուղար	1236		1236	
բ. Տումարք, Տպագր. եւն.	309		957	
գ. Թղթակցութիւն	1030	2575	1775½	3968½
փոխադրելի	—	28943	—	25449¾

	ՆԱԽԱՏԵՍԵԱԼ		ԻՐԱՊԱՆ	
փոխադրեալ	—	28943	—	25449 ³ / ₄
8 Թոշակք Ուսուցչաց				
Յ. Մատաթեան	22248		22248	
Ս. Սողիկեան*)	19776		19776	
Գ. Աբուլեան*)	19776		19776	
Դ. Ումիկեան	11124		11124	
Խ. Բաղդասարեան (ճյուճ)	12360		8240	
Ն. Թոթվայեան (սճկճ)	7416		10408 ³ / ₄	
Պ. Ռընօ (գաղղ)	12360		13905	
Տ. Բրուտեան	7416		7416	
4 օգնական Ուսուցիչք	9888	122,364	2472	115,365 ³ / ₄
9 Վարձք Սպասաւորաց				
Դռնապան	618		618	
2 Գիշերապան	1236		1215 ¹ / ₂	
2 Սեղանապետ	1236		1234 ¹ / ₂	
Լուսարար	618		580 ³ / ₄	
Խոհարար	1236		1236	
2 օգնական	1236		1226 ¹ / ₄	
Արտաքնոցապան	618		586 ¹ / ₂	
Պալտիզպ. եւ սառնապի.	618		618	
այլ եւ այլք	309	7725	33 ¹ / ₄	7348 ³ / ₄
փոխադրելի	—	159,032	—	148,164 ¹ / ₄

*) Որոշա բնակութիւնները վարժարանի մէջ լինելով Թոշակներէն 24 ական ոսկի զեղչուած է:

	ՆԱԽԱՏՆՈՅԱԼ		ԻՐԱԿԱՆ	
փոխադրեալ	—	159.032	—	148.164 ¹ / ₄
10 Ուսելիք-Ընպելիք				
Յորեան եւ այլեր	12875		35273	
Աղայ, հացգործ. եւ պիտոյք	3605		2196	
Միս, ռաւ, ձուկ	19570		14985 ¹ / ₄	
Բրինձ	5150		5095 ¹ / ₄	
Իւղ	5150		4882 ¹ / ₂	
Խմորեղէն	1030		1723 ¹ / ₄	
Կանթերէն, պանրեղէն	3090		1652	
Շաքար	5150		4375 ¹ / ₄	
Թէյ	618		608	
Ձէթ	412		280 ³ / ₄	
Մրգեղէն	3090		2402 ¹ / ₄	
Չոր ծիւրան, չամիչ եւն.	309		15	
Աղ եւ համեմունք.	824		809 ¹ / ₄	
Բանջարեղէն	1545		1739 ¹ / ₂	
Ընդեղէն	309		395 ¹ / ₄	
Գետնախնձոր	1030		1497	
Կաղամբ, սոխ	515		615 ¹ / ₂	
Հաւկիթ	2060		1032 ¹ / ₂	
Հիւրասիրութիւն	515		441 ¹ / ₂	
Գինի, քացախ	412	67.259	70	80089
փոխադրելի	—	226.291	—	228.253 ¹ / ₄

	ՆԱԽԱՏԵՍԵԱԸ		ԻՐԱԿԱՆ	
փոխադրեալ	—	226,291	—	228253 ¹ / ₄
11 Զգեստ, Կօշիկ				
ա. Զգեստ	13390		10207 ¹ / ₄	
բ. ձեռնկողիկն և շոճկոնակ	3090		1400 ³ / ₄	
գ. Դերձակ և կարկանդ	4635		4917	
դ. Ֆեւ, ծոյգ և կաղպար	1030		902 ¹ / ₂	
ե. Գուլպայ	1030		1028	
զ. Երեսարբիկ, քաշկիճակ	515		606 ¹ / ₂	
կ. Կօշիկ և նորոգութիւնք	9785	33475	41023 ³ / ₄	30085 ³ / ₄
12 Մաքրութիւն				
ա. Բաղնիք, օճառ	2060		1489 ¹ / ₂	
բ. Լուսոց	6180	8240	5318 ¹ / ₄	6807 ³ / ₄
13 Հիւանդանոց				
ա. Այցելու բժիշկ (մնայուն)	3708		1854	
բ. Արտակարգ » (պատանկն.)	206		608	
գ. Հիւանդապահ	618		618	
դ. Դեղօրայք	618	5150	94 ¹ / ₄	3174 ¹ / ₄
14 Վառելիք				
ա. Փայտ, արար, ածուխ	20085		18663	
բ. Այլ և այլք	206	20291	2280	20943
15 Լոյս				
ա. Բարխուզ, մոմ	3090		3326 ¹ / ₄	
բ. Լուցկի, շիշ	515	3605	673 ¹ / ₂	3999 ³ / ₄
փոխադրելի		297,052		293,263 ³ / ₄

	ՆԱԽԱՏԵՍԵԱԼ		ԻՄԱՄԱՆ	
փոխադրեալ		217.052		293 263 ³ / ₄
16. Գրադարան				
ա. Լրագիր	1030		1081 ¹ / ₂	
բ. Գիրք	1030	2060	1049	2130 ¹ / ₂
17. Թանգարան	—	206	—	19
18. Երաժշտարան				
այլ եւ այլք	—	515	—	216
19. Կազմարան				
այլ եւ այլք	—	309	—	219 ¹ / ₂
20. Արհեստանոց				
ա. Երկու արհեստապետք	148.12		15050	
բ. Գործիք	515		422	
գ. Երկաթ, ատաղձ	1030		1009 ³ / ₄	
դ. Ածուխ, ներկ, գամ	2060		4101	
ե. այլ եւ այլք	206	18643	896 ¹ / ₂	18479
21. Կալուածք				
ա. Սերմ	7725		13471	
բ. Ագարակապետ	4236		4236	
գ. Պետական տուրք	1030		1026 ¹ / ₂	
դ. այլ եւ այլք	309	10 300	92 ¹ / ₂	15825 ³ / ₄
22. Աւակերտք	—	—	—	—
փոխադրելի	—	329.085	—	330.153 ¹ / ₂



361

	ՆԱԽՆՏՆԵՄԱԿ		ԽՐԱՆՆԵՐ	
փոխարեալ	—	329085	—	330,153 ¹ / ₂
23. Արգակարգ		4030		3713 ³ / ₄
				<u>333,867¹/₂</u>

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Միամեայ ծախսուց մէն մի աւակերտի համար

81

1

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

1	Հոգեղոյս Հիմնադիրն	—		—	
2	Վարժարան	16207	—	200	086
3	Ննջարան	296	50	3	660
4	Դասարան-Մարզարան	3386	—	41	802
5	Ճաշարան-Խոհանոց	980	—	12	099
6	Կրօնական	611	75	7	552
7	Պատժօրհանական	3968	50	48	993
8	Թոշակի Ուսուցչաց	115365	75	1424	268
9	Վարձի Սպասաւորաց	7348	75	90	725
10	Ուսելիք-Ընկելիք	80089	—	988	753
11	Զգեստի-Կօշիկի	30085	75	371	429
12	Մաքրութիւն	6807	75	84	046
13	Հիւանդանոց	3174	25	39	188
14	Վառելիք	20943	—	258	555
15	Լոյս	3999	75	49	379
16	Գրադարան	2130	50	26	302
17	Թանգարան	19	—	—	234
18	Երաժշտարան	216	—	2	666
19	Կազմարան	249	50	2	709
20	Արհեստանոց	18479	—	228	135
21	Կալուածի	15825	75	195	379
22	Աւակերտի	—	—	—	—
23	Արտակարգ	3713	75	45	839
		333,867	25	4121	799

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սանասարեան Վարժարանին Կարնոյ

1893-94 ՎԱՐՃԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

I. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

(Ա.) Պարտաւորիչ աւարկաներ եւ իւրաքանչիւր դասարանի մէջ անոնց յատկացեալ շաբաթական դասեր.

	ԴԱՍԱՐԱՆ				Գումար
	ՆՊ	II	V	VI	
Կրօն	3	3	3	2	11
Եկեղեցական Պատմութիւն	—	—	—	2	2
Հայերէն Աւստիւրագրութիւն	6	3	2	2	13
Հայերէն Գրագրութիւն	—	2	3	2	7
Տանկերէն	5	5	5	5	20
Գաղղիերէն	—	7	6	6	19
Գերմաներէն	—	—	3	4	7
Պատմութիւն	2	2	2	2	8

	ԴԱՍԱՐԱՆ				Գումար
	ՆՊ	II	V	VI	
Աւխարնագրութիւն	2	2	2	2	8
Բնապատմութիւն	2	2	4	4	6
Բնաբանութիւն	—	—	2	2	4
Տարրաբանութիւն	—	—	2	2	4
Թուաբանութիւն	6	4	4	4	12
Գրահաւի	—	—	2	2	4
Երկրաչափութիւն	—	—	2	2	4
Գեղագրութիւն	2	2	—	—	4
Գծագրութիւն	2	2	—	—	4
Երգ	2	2	4	4	6
	32	36	37	38	143

(Բ) Ուսուցիչք եւ իրենց տարաթական դասերու թիւը.

	ՆՊ	II	V	VI	Գումար
ա. Տեսուչներ					
Աբուլ լեւան Գէորգ		2 Աշխարհ .	2 Աշխարհ .	2 Աշխարհ .	16
		2 Պատմ .	2 Պատմ .	2 Պատմ .	
			2 Զուժակ .	2 Զուժակ .	

	ՆԳ	II	V	VI	Գումար
Մատանեան Յ.	2 Բնապա.	2 Բնապա.	1 Բնապա. 2 Բնաբան. 2 Տարրաբ. 3 Գերմ.	1 Բնապա. 2 Բնապա. 2 Տարրաբ.	17
Սողիկեաց Եարգիս		3 Կրօն 1 Դաշնակ	3 Կրօն 1 Դաշնակ	2 Կրօն 4 Գերմ.	16
			1 Դաշնակ	1 Նրգ	
Բաղդասարեան Խ.	6 Հայ. Աշխ. 2 Պատմ.	Հայ. Աշխ. 2 Հայ. Գրա.	2 Հայ. Աշխ. 3. Հայ. գրա.	2 Հայ. Աշխ. 2 Հայ. Գրա. 2 Նկեր. պա	24
Թոնվայեան Ն.	5 Տաճկ	5 Տաճկ. 3 Գաղղ	5 Տաճկ 1 Գաղղ	5 Տաճկ	24
Աւիլեան Դ.	6 Թուաբ.	4 Թուաբ.	1 Թուաբ. 2 Գրաի. 2 Նրկրաչ.	1 Թուաբ. 2 Գրաի. 2 Նրկրաչ.	20
Ռընօ Թ.		4 Գաղղ.	5 Գաղղ.	6 Գաղղ.	15

	Ե.Պ	II	V	VI	Գումար
Գ. Օգնական Ուսուցիչ.					
Աղապալեան Ս .	2 Աշխարհ . 2 Գծագր .	2 Գծագր .			6
Հոյինեան Գ .	2 Երգ . 2 Շուճակ	2 Երգ . 2 Գեղագ . 2 Շուճակ			10
Ջիգէրջեան Գ .	3 Կրօն 2 Գեղագ .				

Գ. Կամաւոր առարկաներ

ԱՆԳՂԻՆԻՒՆ Լեզուն այս տարի ևս կարելի չեղաւ աւանդել՝ հարկ եղած թուով փափաքողներ չգտնուելուն համար

ԴԱՇՆԱԿԻ դասընթացքին կ'հետեւէին 7 թոշակաւոր աշակերտներ, 5ը երկրորդէն եւ 2ը հինգերորդէն :

ՉՈՒԹԱԿԻ դասընթացքին կ'հետեւէին 10 թոշակաւոր և 8 ձրիավարժ աշակերտներ, ընդամենը 18 հոգի, 11ը երկրորդէն, 6ը հինգերորդէն և 1ը վեցերորդէն :

Դաշնակաժողովներուն և Չուժակաժողովներուն 3 կարգերը կառնէին շարաթը 2 ական դաս, և իւրաքանչիւր աշակերտ կ'ընէր օրը իբր 1 ժամ կրթութիւն՝ աղատ և կամ սերողութեան յատկացեալ ժամերու մէջ :

Ատոոցիչներու տուած եւ պակսած դասերու գումարները

ՈՒՍՈՒՑԻՉ	Ունէր	Աւելի տուաւ	Պակսեցաւ			Հնդամենը տուաւ
			Հիւանդուեան պատճ.	Վարժարանի գործով	Անճական պատճառ .	
Աբուլեան Գէորգ	515	—	68	—	—	447
Մատանեան Յովսէփ	548	—	44	24	—	480
Սողիկեան Սարգիս	515	1	—	—	—	516
Բաղդասարեան Խաչատուր	781	—	23	2	—	756
Քոթվայեան Նիկողոս	763	1	—	—	—	764
Ումիկեան Դաւիթ	640	—	14	—	—	626
Ռընօ Ժան	509	22	41	—	6	484
Աղապալեան Սիմօն	185	—	—	—	2	183
Ղոյինեան Գրիգոր	257	—	—	—	—	257
Ջիգէրջեան Գէորգ	164	—	—	—	—	164
	4877	24	190	26	8	4677

II. ՏՆԱԿԱՐԳ:

Օրուան ժամանակի բաշխումը կատարուած էր տարիներ է իվեր դրեթէ անփոփոխ պահուած *ռ-կ-դ-ն* համաձայն, որ հետեւեալն է,

Առաւօտուն նշան տրուածին պէս աշակերտները անկողնէն կեննեն, ձմեռը (ըստ Եւրոպ.) ժամը 6 ին եւ ամառը 5 ին:

Ելնելու համար տրուած նշանէն կէս ժամ յետոյ աշակերտները լուացուած, սանտրուած եւ հագուած լինելով երաժշտութեան սրահին մէջ կը կատարեն իրենց առաւօտեան աղօթքը, որ կը բաղկանայ «Առաւօտ լուսոյ» երգէն, «Հայր մեր» էն եւ «Գոհանամք դքէն տէր Աստուած մեր» առաւօտեան մաղթանքէն: Աղօթքէն յետոյ կսկսի առաւօտեան պարապմունքը, որ կը տեւէ ձմեռը 6, 40 էն մինչեւ 7, 40 և ամառը 5, 40 էն մինչեւ 6, 40:

Ձմեռը 7, 40 էն եւ ամառը 6, 40 էն ճաշարանին մէջ կը նախաճաշեն՝ ստանալով հաց եւ թէյ, շարաթը երկու անգամ նաեւ հաւկիթ կամ պանիր: Նախաճաշը ինչպէս նաեւ ճաշն ու ընթրիքը կ'սկսին եւ կը վերջանան աղօթքով: Նախաճաշէն յետոյ մինչեւ դասերուն սկսելը ազատ ժամանակ է:

Ձմեռը 8 էն մինչեւ 12 և ամառը 7 էն մինչեւ 11 կը տրուին իւրաքանչիւր դասարանի մէջ չորս դաս, որոնք իրարմէ կը բաժնուին մէկ մէկ քառորդ ժամի դադարով, այնպէս որ իւրաքանչիւր դաս կը տեւէ $\frac{3}{4}$ ժամ:

Ժամը 12 ին ճաշ կը լինի, որ կը բաղկանայ ապուրէ, մէկ տեսակ պարզ կամ բանճարեղէնով խառն մսեղէն կերակուրէ եւ շարաթը երկու անգամ նաեւ խմորեղէնէ կամ պտուղէ: Ճաշէն յետոյ մինչեւ ժամը 2 ազատ ժամանակ է:

Ժամը 2 ին կ'սկսին կէսօրէն յետոյ մինչեւ ժամը 5 եղած դասերը: Այդ միջոցին պարապմունքի յատկացեալ են այդ ժամերը, որոնց մէջ այս կամ այն դասարանը դաս չունենար:

Ժամը 5ին ընթրիք կը լինի, որ կը բաղկանայ մէկ տեսակ մսեղէն կերակուրէ: Անկէ յետոյ մինչեւ 6 ազատ ժամանակ է: 6 էն մինչեւ 7 կառնուին երաժշտական եւ արհեստական դասերը, որոնց

չմասնակցողներուն համար այդ միջոցը յատկացեալ է պարագմունքի :

Ձմեռը $8\frac{1}{2}$ ին եւ ամառը $7\frac{1}{2}$ ին տեղի կունենայ երեկոյեան աղօթքը, որ կը բաղկանայ «Հրեշտակ զուարթուն» երկձայն երգէն, «Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ» մաղթանքէն եւ «Հայր մեր» էն : Փոքրերը կը պառկին ձմեռը $8\frac{1}{2}$ ին, ամառը $7\frac{1}{2}$ ին, խոկ մեծերը՝ ձմեռը $9\frac{1}{2}$ ին, ամառը $8\frac{1}{2}$ ին :

Շարաթ օրերը կէսօրէն յետոյ դաս չի տրուիր : Նոյն օրուան երեկոյին եւ կիւրակէ առաւօտ աշակերտները ուսուցիչներու հետ միասին Ս. Եկեղեցի կերթան :

III. ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Ա. Փոփոխութիւններ տարեմէսի առթիւ

Նախօրդ (1892-93) Վարժարանական տարուան վերջը (տարեկան քննութիւններու միջոցին) աշակերտներուն թիւն էր 81 : Սոյն (1893-94) Վարժարանական տարուան սկսելէն առաջ պակսեցան,

VI. էն՝ Նախօրդ տարուան Տեղեկագրին մէջ յիշուած 17 ընթացաւարտները :

V. էն՝ 18. Դրմիտան, 19. Չաքարեան վահրամ, 20. վեփեան Ռուբէն, 21. Խըտչեան Մանուկ :

IV. էն՝ 22. Աջէմեան Որրահամ, 24. Բակալեան Եղիա, 24. Մսրեան Արմենակ, 25. Յակոբեան Որտաչէս, 26. Շահինեան Արամ, 27. Շահինեան Մկրտիչ, 28. Պարսամեան Գրիգոր, 29. Սահաթչեան Մկրտիչ :

I. էն՝ 30 Բէրբէրեան կարապետ :

Շատ անգամ մնացին 51 աշակերտ : Տարեգլխին ընդունուեցան 30 աշակերտներ, այնպէս որ վարժարանս սոյն տարուան մէջ ունեցաւ ընդամենը 81 աշակերտ, որոնք Դասարաններուն վրայ բաշխուած էին հետեւեալ կերպով :

Բ. ՑԱՆԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՆ

(* կրցուցնէ: ճոր բնղումուածնեքք, (օ) կրցուցնէ: տարուամ բնբացլիմ մէջ միեկու տարեկամ բննուրիւննեքք պակսածնեքք *)

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ (26).

- * 1. Աղապալեան Եղուարդ, Կարին
- * 2. Բաղտասարեան Գարեգին, Կեսարեա
- * 3. Բէզիրջեան Յակոբ, Գոնեա
- * 4. Բրուտեան Կարապետ, Արաբկիր
- * 5. Գասպարեան Յարութիւն, Ատանա
- * 6. Կէզիւրեան Յովհաննէս, Մալաթիա
- * 7. Կիւլպէնկեան Արշակ, Եօղլատ
- * 8. Կիւլպէնկեան Միսաք, Թալաս (Կեսարիա)
- * 9. Կիւլպէնկեան Սիսակ, Թալաս (Կեսարիա)
- * 10. Կիւլպէնկեան Գերոբէ, Եօղլատ
- * 11. Թաշլեան Նշան, Խարբերդ
- * 12. Թէրղոլեան Արտաշէս, Կարին
- * 13. Լուսպարոնեան Հրաչեայ, Կարին
- * 14. Գույումճեան Թորոս, Տիարպէքիր
- * 15. Գույումճեան Վահան, Ակն
- * 16. Գույումճեան Տիգրան, Տիարբէքիր
- * 17. Կրտօտեան Խաչատուր, Սեբաստիա
- * 18. Հանէսեան Տիրան, Կարին
- * 19. Հիւսիսեան Երուանդ, Ե. Գ. Հիսար
- * 20. Մարգարեան Կարապետ, Տրապիզոն
- * 21. Յակոբեան Արամ, Կ. Պօլիս
- * 22. Յակոբեան Մելքոն, Եօղլատ
- * 23. Զիզմէջեան Հմայեակ, Երիզա
- * 24. Սիւրմէնեան Արմենակ, Երիզա
- * 25. Սրուանձտեան Հրանտ, Տիարպէքիր
- * 26. Տէր Նէրսէսեան Վարդան, Զէյարէթ (Մուշ)

ԵՐԿՐՈՐԴ (26)

27. Բօղղյեան Նազարէթ, Կարին
28. Զէքեան Տիգրան, Եօղղատ
29. Թիւթէլեան Միհրան, Մալաթիա
30. Թօխաջեան Թագէոս, Կարին
31. Թօփալեան Արտաշէս, Կ. Պօլիս
32. Թօփալեան Տիգրան, Կ. Պօլիս
33. Խէրբէգեան Բագրատ, Կարին
34. Ծատուրեան Վազարշակ, Բարերդ
35. Կարապետեան Նշան, Սեբաստիա
36. Կափլանեան Միքայէլ, Եօղղատ
37. Կիւրոյեան Արմենակ, Բարերդ
38. Հանէսեան Արմենակ, Կարին
39. Հանէսեան Բիւղանդ
40. Հէյրանեան Արմենակ, Տիվրիկ
41. Ղուկասեան Հրաչեայ, Շ. Գ. Հիւսար
42. Մէղպուրեան Մկրտիչ, Կ. Պօլիս
43. Նահապետեան Սրապիոն, Կարին
44. Ներսէսեան Գարեգին, Բարերդ
45. Կննոզեան Արսէն, Կեսաբիա
46. Կննոզեան Գէորգ, Էնկիւրիւ
47. Պալատանեան Պարոյր, Կարին
48. Պօղոսեան Համազասպ, Ալաշկերտ
49. Սիրքէլեան Արամ, Տիարպէքիբ
50. Սիւզմէճեան Յովհաննէս, Եւզոկիա
51. Տէր Գրիգորեան Խոսրով, Ակն
52. Փասպանեան Լեւոն, Եւզոկիա

ՀԻՆԳԵՐՈՐԴ (27).

53. Արշարունի Եղուարդ, Կ. Պօլիս
54. Պալարեան Արամ, Կարին

55. Կիւլպէնկեան Գառնիկ, Եօղղատ
56. Դանիէլեան Հայկ, Երիզա
57. Եկաւեան Բարթոռ, Արարկիւր
58. Թէլլալեան Յովհաննէս, Կեսարիա
59. Թօղաթլեան Երուանդ, Սամսոն
60. Խէրբէգեան Մարտիրոս, Կարին
61. Կօջունեան Տիգրան, Կիւրին
62. * Օ. Գուլումճեան Միսաք, Կեսարեա
63. Օ. Գուլումճեան Նշան, Խարբերդ (Մեղիբէ)
64. Մուրատեան Արտաշէս, Սամսոն
65. Մուրատեան Վահան, «
66. Միսաքեան Հրանա, Խարբերդ (Մեղիբէ)
67. Զաղացպանեան Եղիշէ, Վան
68. Օ. Քէշիշեան Յակոբ, Մարզուան
69. * Պէթվաճեան Միսաք, Տրապիզոն

ՎԵՑԵՐՈՐԴ (12).

70. Արագիլեան Ստեփան, Սերաստիա
71. Բալակեան Գրիգոր, Եւդոկիա
72. Պէզիրգանեան Մկրտիչ, Կարին
73. Կիւլպէնկեան Մկրտիչ, »
74. * Գուլումճեան Խոսրով, Տիարպէքիւր
75. Գուլումճեան Դուկաս, Խարբերդ (Մեղրէ)
76. Մանուկեան Վահան Էնկիւրիւ
77. Շահինեան Վահան, Կարին
78. Զիրքինեան Խոսրով, Արարկիւր
79. Սիւրմէնեան Գիսակ, Երիզա
80. * Տէր Պօղոսեան Մանուէլ, Վան
81. Տէր Սահակեան Մարտիրոս, Սամսոն

(Գ) Վիճակագրական ծուցակ

	ՆՊ	II	V	VI	Գ.ու.մար
Վարժ. տարուան սկիզբը մտան	26	26	17	12	81
Կանոնաւորապէս դասարան փոխողներ	=	26	15	10	51
Կրկնողներ	—	=	—	—	—
Միամեայ բացակայութենէ յետոյ վերստին ընդունուածներ	1	—	2	2	5
Նոր ընդունուածներ	25	—	—	—	25
Վարժ. տարուան ընթացքին մէջ մտան	=	—	—	—	—
Վարժ. , , , պակսցն.	—	—	3	=	3
Մինչեւ տարեկան քննութիւնները մընացին	26	26	14	12	78

(Դ) Աւակներսներու ծնողներուն բնակավայրերը կը ներկայանային հետեւեալ թիւերով.

	Թոշակաւոր	Զրիավարժ	Գ.ու.մար
Կարին	9	7	16
Կեսարեա	5	1	6
Եօզղաս	5	1	6
Կ. Պօլիս	3	3	6
Տիարպէքիք	3	2	5
Սամսոն	3	1	4
Երիզա	3	1	4
Խարբերդ	3	1	4
Սեբաստեա	2	1	3
Բարբերդ	2	1	3
Արարկեր	1	2	3

Շ . Գ . Հիսար	2	—	2
Էնկիւրի	2	—	2
Տրապիզոն	1	1	2
Եւզոկեա	1	1	2
Վան	1	1	2
Մալաթեա	1	1	2
Ակն	1	1	2
Տիվրիկ	1	—	1
Կիւրին	1	—	1
Մարզուան	1	—	1
Ատանա	—	1	1
Գոնեա	—	1	1
Մուշ (Ջիյարէթ)	—	1	1
Ալաշկերտ	—	1	1

Ե) Աւարսման վկայականով ելան Վարժարանէս,

ԱՆՈՒՆ	Ենկերան քուսիոն	Ենկուսայր	Աշակերտական Տարիներ
1. Արագիլեան Ստեփան	17 Նոյ . 1876	Սերաստեա	8
2. Բալակեան Գրիգոր 1877	Եւզոկեա	8
3. Պէգիրկեանեան Մկրտիչ	15 Յունիս 1877	Կարին	9
4. Կիւլպէնգեան Մկրտիչ	15 Յունվ. 1877	»	9
5. Գուլումեան Խոսրով	Տիարպէքեր	8
6. Գուլումեան Ղուկաս	24 Սեպտ. 1876	Խարբերդ	8
7. Մանուկեան Վահան	3 Յուլիս 1878	Կ. Պօլիս	8
8. Շահինեան Վահան 1878	Կարին	8
9. Զիքքինեան Խոսրով	6 Օգոս. 1876	Արաբկեր	8
10. Սիւրմէնեան Գիսակ	10 Փետր. 1877	Երիզա	8
11. Տ. Պօղոսեան Մանուէլ	21 Նոյ . 1874	Վան	8
12. Տ. Սահակեան Մարտիրոս	4 Սեպտ. 1876	Սամսոն	8

ԽՎ, ԱՐՇԵՍԱՆՈՑ.

Արհեստանոցին մէջ ինչպէս ցարդ կաւանդուէին կոպղա-
բարութեան եւ կահագործութեան արհեստները: առաջինը՝ Ար-
հեստապետ Յակոբ Ստեփանեանի, եւ երկրորդը՝ Արհեստապետ
Սուքիաս Սէյլանեանի առաջնորդութեամբ:

Բուն արհեստաւոր աշակերտները, որոնք ամբողջ օրը կը պա-
րապէին Արհեստանոցին մէջ, առանց մասնակցելու Վարժարանի
Ուսումնական Բաժնի ընթացքին, հետեւեալներն էին.

- | | |
|--------------------------|----------|
| 1. Ատդէյեան Յովհաննէս, | Կահագործ |
| 2. Բղնունեան Մանուկ, | » |
| 3. Բրուտեան Պետրոս, | Կոպղարար |
| 4. Մարաչլեան Սեդրաք, | » |
| 5. Տէր Գրիգորեան Սեդրաք, | Կահագործ |
| 6. Յրոյեան Աբեդ, | » |
| 7. Յրոյեան Վարդան, | Կոպղարար |

Վարժարանիս Հոգաբարձութիւնը բուն արհեստաւոր եր-
թեւեկ աշակերտներուն համար յատուկ կարգադրութիւն մը ըրած
էր, որուն համաձայն աշակերտներուն նուիրել որոշած է վաճա-
ռելի ապրանքներուն զուտ շահին ⁰ 25ը, սակայն այդ գումարը
մէկէն չի արուիր իրենց, այլ կը պահուի Վարժարանիս Արկղին մէջ,
որպէս զի երբ աւարտեն իրենց արհեստական ուսման ընթացքը,
որ 4 տարի է, 4 տարուան գումարը միասին ստանան եւ այսպէս
Վարժարանէն ելնելու պահուն փոքրիկ դրամագլխի մի տէր լինին:
Երթեւեկ արհեստաւոր աշակերտները Վարժարանէն կստանան
նաեւ ամէն օր Նախաճաշ եւ ճաշ, իրենց ուսման երկրորդ տա-
րիէն սկսեալ տարեկան զոյգ մը կօշիկ եւ չորրորդ տարին նաեւ
ձեռք մը զգեստ:

Վարժարանիս Ուսումնական Բաժնի վերաբերեալ արհես-
տաւոր աշակերտները, որոնք Արհեստ մը իբրեւ կամաւոր առար-
կայ ընտրած լինելով՝ միմիայն օրական 1 ժամ կը պարապէին Ար-
հեստանոցին մէջ, 15 հոգի էին, որոնցմէ 1ը Զրիավարժ եւ
միւսները թուշակաւոր: Կոպղարարներն էին 8 հոգի. — 6ը Ուէն

եւ 2ը V. էն, Իսկ կահագործները՝ 7 հոգի, — 1ը II. էն, 1ը V. էն
եւ 5ը VI. էն.

Թէ՛ բուն արհեստաւորները և թէ՛ Ուսումնական բաժնին
վերաբերեալ արհեստաւորները այս տարի եւս արտագրեցին եր-
կաթէ եւ փայտէ շատ մը գեղեցիկ աշխատանքներ, որոնց մէջ նը-
շանաւոր էր տեղիս Վսեմ. Կուսակալին համար շինուած ընկուզէ
մեծ գրասեղանը.

Կազմարանին մէջ, որ Արհեստանոցի մաս կը սեպուի, այս
տարի եւս 10 ի չափ աշակերտներ Օգնական - Ուսուցիչ Ս. Աղա-
բալեանի առաջնորդութեամբ կազմեցին Մատենադարանին եւ կամ
աշակերտներուն վերաբերեալ բազմաթիւ գրքեր:

Մ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(Ա) Գրադարանը, որու պետն էր այս տարի Օգնական-
Ուսուցիչ Գէորգ Ջիգէրջեան, գնմամբ ստացաւ կարգ մը մանկա-
վարժական եւ ուսումնական գրքեր ու պարբերական հրատարա-
կութիւններ, մեծ մասամբ Գերմաներէն.

Օտար երկիրներու մէջ Գաղղիերէն լեզուն տարածելու հա-
մար կազմուած Գաղղիական ընկերութիւնը (Alliance Française),
որ ասկէ առաջ տեղիս նախորդ Գաղղիական Հիւպատոս Պ. Վի-
գուրէօի միջնորդութեամբ նուիրած էր վարժարանիս իբր 60 կտոր
ընթերցանութեան փառակազմ գրքեր, այս անգամ այժմեան
Հիւպատոս Պ. Բէրժըրոնի (Bergeron) միջնորդութեամբ վարժա-
րանիս նուերեց Գաղղիերէն դասական գրքեր, իբր 50 կտոր. նոյն-
պէս տեղիս Ռուսական Հիւպատոս Պ. Մաքսիմֆ նուիրեց Revue
des deux mondes ի 1893 տարուան բոլոր պրակները.

(Բ) Աւստրիագրական - Պատմական ուսմանց միջոցներուն
վրայ աւելցան քանի մը նոր քարտէսներ:

(Գ) Բնապատմական հաւաքածոյները նոր յաւելումներ
չունեցան:

(Դ) Երկրաչափական ուսման միջոցներուն վրայ աւելցան
քանի մը նոր ձեւեր:

(Ե) Քիզիփական - Քիմիական քանգարանը ստացաւ իւր 150 ոսկիի արժողութեամբ բազմաթիւ մեքենաներ ու գործիչներ, որոնց մէջ կգտնուի նաեւ Մոզական լապտեր մը պատկերներու հաւաքածոյով մը հանդերձ: Տեղիս Մաքսատունը մնացած է հեռագրական և ելեքարական և այլ գործիքներ զորս պիտի ստանայ Տեսլութիւնս ի մտայ:

(Զ) Հնուքեանց քանգարանին նուիրեցին՝ - Բժիշկ Յարութիւն էֆ. Հեքիմեան Կարնեցի՝ Եգիպտական մուսիայի գլուխ մը եւ Հիւպատոսական թարգման Վարդերէս էֆ. Զլինդիրեան Աղեքսանդրապօլցի՝ Հայերէն հին ձեռագիր մատեան մը:

Վարժարանս քաղցր պարտք կը համարի այս տեղ ջերմագին շնորհակալութիւն յայտնել բոլոր նուիրատուներուն:

ՄԻ. ՎԱՐժԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Վարժարանի Խնամակալութիւնը կը կազմէին Սըրազան Պատրիարք Հօր նախագահութեամբ հետեւեալ 6 ազգայիները:

Էստեան Յովհաննէս	էֆէնտի
Կիւլպէնկեան Պատրիկ	»
Մաքսուտ Սիմոն	պէյ
Նորատունկեան Գարրիէլ	էֆէնտի
Նուրեան Յովհաննէս	»
Ունճեան Աբիկ	»

Վսեմ. Կսակարար, որ իսկզբանէ անտի իւր ջերմ հոգածութեան ու սիրոյն առարկայ ըրած է իւր Հանդուցեալ Բարեկամին և Ազգիս մեծ Բարերարին դաստակերտը, այս տարի եւս Կտակի եւ Կանոնագրի սրամազրութիւններուն համաձայն իւր աջակցութիւնն լիովին նուիրեց Վարժարանիս Վարչական մարմիններուն:

Հոգաբարձական մարմինը կը կազմեն տեղիս Առաջնորդ Ս. Հօր նախագահութեամբ քաղաքիս ազգայիներէն Տեարք

Խարաջեան Գանիէլ
Համամճեան Յակոբ

Տէր Ազարեան Կարապետ և
Վարժարանիս Տեսչութեան Երեք անդամները՝
Քաղաքացի անդամներուն փոխանորդներն էին՝
Տեարք՝

Խէրրէգեան Չաքար
Կայթանջեան Մկրտիչ
Տիգրանեան Յակոբ՝

Հոգարարձութեան Գանձապետն էր Յ. Էֆ. Համամճեան,
Քարտուղարը՝ Միհրան Էֆ. Չուխաջեան եւ երկու Մատակարար-
ները՝ Տիգրան Էֆ. Բրուտեան եւ Գրիգոր Էֆ. Ղոյնեան։

Պատ. Հոգարարձութիւնը տարուան ընթացքին մէջ ունեցաւ
ընդամենը 19 նիստ։ Եւր բազմաթիւ կարեւոր անօրինութիւննե-
րու շարքին մէջէն այստեղ հարկ կը սեպենք յիշել Վարժարանի
շէնքերուն մէջ տարուան սկիզբը կատարուած քանի մը ներքին
փոփոխութիւնները։ Հին Շէնքին մէջ գտնուած Ննջարահը եւ
2 դասարանները միջնորմներու բարձմամբ կամ յարակից սենեակ-
ներու միացմամբ խիստ ընդարձակուեցան, իսկ Նոր Շէնքին մէջ
գտնուած Ննջարահը աւելորդ դառնալով՝ միջնորմներու միջո-
ցաւ վերածուեցաւ քանի մը սենեակներու, որոնց մին կծառայէ
իրբեւ Ռնադիտութեան թանգարան ու դասարան, 2ը իրբեւ Հի-
ւանդանոց, 1ը իրբեւ դեղարան եւ 1ը իրբեւ Տեսչական սենեակ։
Ասիէ զատ Ննջարահին եւ դասարաններուն բարեխառնութիւնը
աւելի եւս կանոնաւորելու համար պատերուն մէջ հիւսուած մեծ
վառարաններ շինուեցան Ռուսաստանէն եկած վարպետի մը ձե-
ռամբ։ Այսպէս երկու շէնքերուն բաժանումները առաջուրնէ ա-
ւելի վայելուչ, գործնական եւ միանգամայն առողջապահական
օրէնքներուն համաձայն դարձան։

Վերաեսչուրքիւնը կը կազմէին, ինչպէս ցարդ, Հիմնադիր-Բա-
րերարի 3 Սաները այն պաշտօնական յատուկ կարգադրութեան
համաձայն, զոր Վսեմ. Կտակակատարը ըրած է անոնց պաշտօ-
նավարութեան եղանակին ու պայմաններուն մասին։ Այդ կար-
գադրութեամբ 3 Տեսուչներուն հաւաքական պատասխանատու-
թեան ներքեւ կթողուի Վարժարանիս Տեսչութիւնը եւ հետեւեալ
կերպով կորոշուին անոնց մասնաւոր եւ ընդհանուր պարտակա-
նութիւնները։

Յ. Մասաթեան (ա) կը ներկայացնէ Վերատեսչութիւնը կառավարական, պաշտօնական եւ արտաքին յարաբերութիւններու մէջ, (բ) կտանձնէ Վարժարանի ընդհանուր գոյից եւ ի մասնաւորի թանգարանի հսկողութիւնն ու բարեկարգ պահպանութիւնը եւ (գ) հոգ կտանի Վարժարանի Արհեստանոցներու բարոք ընթացքին ու արդիւնաւորման :

Ս. Սողիկեան (ա) կը ներկայացնէ Վերատեսչութիւնը Ուսուցչական Մասնաժողովի մէջ եւ կտանձնէ անոր հետ կապուած պարտաւորութիւնները, (բ) կը վարէ Վարժարանի Օրագրութիւնը, (գ) կը կատարէ աշակերտներու Ծնողաց հետ հարկ եղած թրգթակցութիւնը եւ (դ) կը հսկէ Գրագարանի բարեկարգ պահպանութեան վրայ :

Գ. Աբուլեան (ա) կը ներկայացնէ Վերատեսչութիւնը Հոգաբարձութեան խորհուրդին մէջ եւ կտանձնէ ատոր հետ կապուած բոլոր պարտաւորութիւնները, պաշտօնական գործողութիւնները եւ թղթերու ստորագրութիւնը, եւ (բ) կը կատարէ Վարժարանի գրամական ու հաշուական հսկողութիւնը եւ հաշիւներու ճշդութիւնն ու վաւերացումը : Առանց անոր վաւերացման որեւէ վճարումը չի լինիր : Նա հարկ եղած դրամը կտանայ Գանձապետէն եւ կը յանձնէ Մատակարարին :

Երբ երեքէն մին բացակայ լինի՝ միւսները կտանձնեն անոր պարտաւորութիւնները :

Բացի այս մասնաւոր պարտաւորութիւններէն, որոնց համար սակայն երեքն եւս հաւասարապէս պատասխանատու են, երեքին հաւաքական պարտաւորութիւնն է հոգ տանիլ վարժարանի ընդհանուր նիւթական, ուսումնական եւ բարոյական բարելաւութեան, հսկել Վարժարանի օրէնքին անթերի գործադրութեան եւ ուսուցիչներուն ու այլ պաշտօնեայներուն պաշտօնավարութեան վրայ եւ :

Աւակերտներ եւ Դասարաններ : Վարժարանին դասերը սկսան Սեպտեմբեր ամսի 20 ին :

Նախորդ (92-93) Վարժարանական տարուան վերջը դասուող 84 աշակերտներէն պակսեցան 17 ընթացաւարտներ եւ ուրիշ 13 աշակերտներ, որով հին աշակերտներէն մնացին 51 հոգի : Ասոնց վրայ տարուան սկիզբը աւելցան 30 նոր աշակերտներ, որոնց-

մէ 17ը ձրիավարժ եւ 13ը թոշակաւոր էին։ Այս վերջիններէն 5ը արդէն ասկէ առաջ աշակերտած լինելով Վարժարանին՝ 91-92 վարժարանական տարուան մէջ աւարտած էին՝ 1ը Նախապատրաստական 1ը Երրորդ, 1ը Զորրորդ և 2ը Հինգերորդ դասարանի ընթացքը, սակայն 92-93 վարժարանական տարուան մէջ հնդալստին պատճառաւ չէին կրցած իրենց Հայրենիքներէն վերագառնալ Վարժարան։ Այսպէս տարուան սկիզբը հին ու նոր աշակերտներն էին ընդ ամենը 81, ամէնքն ալ գիշերօթիկ։ Ասոնցմէ դուրս կային միմիայն Արհեստանոցի ընթացքին հետեւող 7 ձրիավարժ աշակերտներ, որոնցմէ մին, դրսեցի լինելով, գիշերօթիկ էր, իսկ միւսները ցերեկեայ էին։

Նորեկ աշակերտներէն 2ը զետեղուեցան VI. դասարանը, 2ը V. ը եւ 26ը Նախապատրաստականը։ Ըստ այսմ Վարժարանի 4 դասարանները կազմուած էին հետեւեալ կերպով.

Ն. պատր. Դասարան	9	Թոշակ	17	ձրիավ.	դումար	26
Երկրորդ	»	49	»	7	»	26
Հինգերորդ	»	15	»	2	»	17
Վեցերորդ	»	8	»	4	»	12

Ընդամենը 51 թոշակ · 30 ձրիավ. դումար 81

Ուսուցչական մարմինը տարուան սկիզբը ստացաւ 3 նոր անդամներ. — Գ. Բաղդասարեան Խ. Թոթվայեան Ն. եւ Ռընօ։

Ուսուցչական Մասնաժողովը կազմուեցաւ ըստ կանոնագրի երեք բարձրագոյն դասարաններու լեզուաց եւ գիտութեանց հայազգի և հայադաւան ուսուցիչներէն, որոնք էին՝ Տեսչութեան 3 անդամները, Գ. Բաղդասարեան Խ. Թոթվայեան Ն. եւ Ումիկեան Դ. Տեսչութեան անդամ Ս. Սողկեան կատեսնապետէր ժողովին. Քարտուղարութեան պաշտօնը կը կատարէր Խ. Բաղդասարեան։ Մասնաժողովը տարուան ընթացքին մէջ ունեցաւ ընդամենը 25 նիստ, որոնց մէկքանիին խորհրդական ձայնով մասնակցեցան նաև միւս բոլոր ուսուցիչները։ Այդ նիստերուն մէջ անօրինուեցան վարժարանական այլևայլ ընթացիկ գործեր, մասնաւորապէս աշակերտներու կարգապահութեան և վարք ու բարքին վերաբերեալ շատ մը խնդիրներ։ Խորհրդակցութիւններն ու որոշումները, ըստ սովորութեան, ամեն անգամ կ'ար-

Հանադրութիւն յատուկ մատենի մէջ և կը վաւերացուէին բոլոր անդամներուն ստորագրութեամբ:

Կառավարչութեան պաշտօնը կը կատարէին Ոգնական Ուսուցիչները օրական հերթապահութեամբ:

Տարուան վերջը Վարժարանս թողին գլխաւոր ուսուցիչներէն ՊՊ. Բաղդասարեան Խ., Ռընօ Ժ., Սէյլանեան Ս. և Ստեփանեան Յ., առաջին երկուքը մէկմէկ և վերջին Չը երեքական տարի պաշտօնավարելէ յետոյ: Առժամակ կերպով Վարժարանս թողին նաև Վ. Ս. Ազապալեան Ս. և Ջիգէրջեան Գ., որոնք յատկապէս Վարժարանիս համար արհեստագէտ ուսուցիչ պատրաստուելու նպատակով՝ Վարժարանիս ծախքով դնացին Աւստրիայի Ռայխընբէրգ քաղաքի Որհեստագիտական Բարձրագոյն Վարժարանը, ուր իրենց մէջ մին կը հետևի Մեքենական՝ և միւսը Քիմիական բաժնի ընթացքին:

Վարժարանս թէ՛ իւր այդ սաներուն և թէ՛ միւս մեկնող պաշտօնեայնեան յաջողութիւն կը մաղթէ ջերմապէս:

Տօներ ու Հանդէսներ. Սովորական դուարթութեամբ ու վայելչութեամբ կատարուեցան Նոր Տարուան, Ս. Ծննդեան, Բարեկենդանի և Ս. Չատկի հանդէսները:

Մայիս 19 ին ըստ սովորութեան տօնուեցաւ Հոգեւոյս Հիմնադիր-Բարերարի մահուան տարեդարձը: Այդ առթիւ Եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ և յետոյ Գեր. Առաջնորդ Սրբազան Հօր հանդիսագրութեամբ Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ:

Նոյ. 1ին Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ վօեմ. Կտակահատարի մօրաքոյր Տիկին Մարիամ Մարտիրոսեան կազաքովայի մահուան տարեդարձին առթիւ: Բարեխիշտակ Տիկինը, որ 1893 ին կնքեց իւր մահկանացուն, իւր ամբողջ հարըստութիւնը, իբր 14 հազար ուրլի, կտակած է վարժարանիս:

Փետրվար 10 ին և Օգոստ. 19 ին վայելուչ հանդիսաւորութեամբ տօնուեցաւ Օգոստ. Կայսեր Ծննդեան և Պահակալութեան տարեդարձները:

Ուրտ 1 էն մինչև 3 տեղի ունեցան Առաջին Կիսամեկի ֆննութիւնք: Ըմեն օր, կէսօրէն առաջ ըստ Եւրոպացւոց ժամը 8, 10 էն մինչև 12 և կէսօրէն յետոյ 2 էն մինչև 3, միևնոյն ատեն

երկու կամ աւելի դասարաններու մէջ իրարու ետեւէ կ'առնու-
էին 2էն մինչև 5 առարկայ, 50 ահան վայրկենի տեւողութեամբ
և 10 ահան վայրկենի ընդմիջմամբ:

Յունիս 23ին և 24ին սովորական ձևով կատարուեցաւ ըն-
թացաւարաններուն գրաւոր քննութիւնները, որոնց յաջորդեցին
նոյն ամսի 28էն մինչև Յուլիս 1 ըստ դասարաններու սարեկան
հրապարակային քննութիւնները: Ամեն օր, առաւօտեան ժամը
7էն մինչև 11, 45, միևնոյն ատեն գրեթէ բոլոր դասարաններու
մէջ իրարու ետեւէ կ'առնուէին 3էն մինչև 4 առարկայ, մէկ մէկ
ժամ տեւողութեամբ և մէկ մէկ քառորդ ժամ դադարով, Աշա-
կերաններու ծնողներէ ու խնամակալներէ և այլ կրթասէր ան-
ձերէ բաղկացեալ ստուար խումբ մը ամեն օր մեծ հետաքրքրու-
թեամբ ու յարատեւութեամբ կ'ունկնդրէր քննութիւններուն,
Շատ մը առարկաներու ներկայ գտնուեցան նաև Գեր. Սրբազան
Առաջնորդ. Հայրը, Գաւառիս Կրթական Ժողովի Ագն. Տնօրէնը և
Վարժարանիս Պատուարժան Հոգարարձութիւնը:

Քննութիւններու վերջին առարկային, այն է Ընթացաւարտ
դասարանի կրօնին, աւարտումէն յետոյ՝ Կրօնուսուցը պարագային
յարմար վերջարանով մը Վարժարանի կողմէն Ողջերթ ըսաւ, ըն-
թացաւարանները, ըստ սովորութեան, իրենց ուսուցիչներուն հետ
միասին Առաջնորդարան երթալով՝ Սրբազան Հօր աջը համար-
ընցին և հրաժեշտ տուին: Նոյն օրը երեկոյին Վարժարանիս մէջ
ըստ սովորութեան հրաժեշտի ընթրեաց սեղան մը տրուեցաւ ի
պատիւ մեկնող ընթացաւարաններուն և պաշտօնեայններուն:

Քննութիւններուն յաջորդ Կիւրակին, այն է Յուլիս 3 ին
Ընթացաւարանները ըստ սովորութեան Հոգեհանգստեան պաշտօն
կատարել տուին Եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագէն յետոյ, Հան-
դիսադիր Առաջնորդ Սրբազան Հայրը ատենանին մէջտեղ սեապատ
սեղանին շուրջը խմբուած Ընթացաւարաններուն Հայրական խը-
րատներ ուղղեց, յատկապէս շեշտելով որ երախտագէտ մնան
միշտ Վարժարանին ու իրենց ուսուցիչներուն և գործով յարգեն
իրենց Ռարերարի՝ յիշատակը: Յետոյ օրհնեց դիրենր ու իրենց
ծնողները, զմարեկարգ Վարժարանին Վարչական մարմիններն ու
Ուսուցչական խումբը և պահպանելով փակեց այն սրտայայտ
հանգէսը

Առողջական վիճակ եւ առողջապահիկ կարգադրութիւններ: Աշակերտներու առողջական վիճակը այս տարի ևս շատ գոհացուցիչ էր ի գործ դրուած առողջապահիկ կարգադրութիւններուն, մասնաւորապէս բացօթեայ դրօսանքներուն շնորհիւ, որոնց ի սկզբանէ անտի մեծ կարեւորութիւն կուտայ Կրթարանս: Աշակերտներն ու ուսուցիչները միասին յաճախ կատարեցին մեծ ու փոքր շրջագայութիւններ: Մասնաւորապէս հաճելի էին դարնանային շրջագայութիւնները, որոնք կուղղուէին փոխն ի փոխ դէպի Ս. Լուսաւորիչ, Աղզը-Աչըր եւ Քըրք-դէկիրմէն:

Աշակերտական կեանքի զուարթութեան ու թարմութեան ոչ սակաւ կը նպաստէին Վարժարանի ընդարձակ խաղարանները, սիրուն պարտէզները եւ ձմեռնային չմշկութեան յոյժ առողջարար մարզանքը:

Վարժարանիս վարչութեան կամքէն անկախ պատճառներով աշակերտները այս տարի զրկուեցան ամառնային օդափոխութենէն, որ ցարդ ամեն տարի տեղի կունենար եւ ամեն անգամ այնչափ զգալի կերպով կրկազդուէր ու կըզօրացնէր ամենքի մարմինն ու միտքը: Վարժարանին գեղեցիկ պարտէզները ընականաբար չէին կրնար բոլորովին փոխարինել այս անակնկալ կորուստը եւ մնոցնել տալ աշակերտներու՝ իրենց սիրելի Ամարաստանին (Սրտաձորի) բազմազան հրապոյրներն ու հաճոյքները:

Աւակերտներու վարքն ու բարքը: Տարուան ընթացքէն մէկ 2 աշակերտներ արձակուեցան Վարժարանիս Հոգաբարձութեան կողմէ, որովհետեւ անոնցմէ մին գողութեան եւ միւսը ըմբոստութեան ծանր յանցանքներ գործած էին եւ ուղղուելու նշաններ ցոյց չէին տար: Վարժարանիս Տեսչութիւնը խորապէս կցաւ իւր հայրաբար սիրած ու խնամած այդ աշակերտներուն համար, եւ ինչպէս նախորդ Տեղեկագրին՝ այնպէս ալ ասոր մէջ հարկ կսեպէ քանի մը սրտարուղիս դիտողութիւններ ուղղել այն ծնողներուն ու խնամակալներուն եւ այն ամեն կրթասէր անձերուն, որոնք գուցէ զարմանան թէ ի՞նչպէս կըլինի որ իւր բարոյական ընտիր դաստիարակութեամբ ծանօթ այս Հաստատութեան մէջ անգամ բոլորովին չեն պակսիր աշակերտական տխուր երեւոյթներ:

Ինչպէս յայտնի է՝ վարժարանս իրբեւ դաստիարակող
Հաստատութիւն միայն ուսմունք չի մատակարարեր, այլ կաշ-
խատի մանկավարժութեան տուած ամեն միջոցներով ընտիր նկա-
մագիր կազմել աշակերտին մէջ. Ուրախալի է տեսնել թէ այդ
ջանքերը ապարդիւն չեն մնար եւ աշակերտները առհասարակ
դովելի վարքի տէր են, այնպէս որ՝ այս կամ էյն վարժարանական
տարուան մէջ մատով ցոյց տրուելու չափ սակաւաթիւ են այն
աշակերտները, որոնք ի դերբեւ կըհանեն իրենց բարքին աղնու աշ-
ման համար թափուած ճիգերը. Տարակոյս չկայ սակայն թէ
դաստիարակներուն այդ ջանքերը կրնան աւելի արդիւնաւոր
լինել, եթէ ծնողներուն եւ հասարակութեան կողմէ հարկ եղած
բարոյական աջակցութիւնը չզլացուի վարժարանին.

Վարժարանս, ինչպէս քաջ գիտեն զայն մտէն ճանցողները,
իւր մատակարարած դաստիարակութեամբ միշտ կաշխատի հա-
սարակութեան եւ մասնաւորապէս ծնողներուն նկատմամբ յար-
գանքի եւ սիրոյ ոգի ներշնչել աշակերտներուն, իրաւունք չունի՝
ինքն ալ պահանջելու որ ծնողներն ու հասարակութիւնը նոյն
ընթացքը բռնեն իւր նկատմամբ եւ միշտ բարձր ու պատկառելի
պահեն իւր հեղինակութիւնը, առանց որոյ անհշարէ ապաքէն
արդիւնաւոր կերպով ներդրածել աշակերտին վրայ. Երբ մեզմէ
անհամեմատ աւելի զարգացած ազգերու վարժարաններն ու
մանկավաճներն իսկ միշտ կըքարոզեն ու կըշնչտեն այդ արտաքին
աջակցութեան կարեւորութիւնը, կրնայ հայ վարժարան մը, որ-
չափ ալ զօրաւոր լինի, չզգալ այդ պէտքը, եւ կրնայ խորապէս
չցաւիլ երբ կըտեսնէ երբեմն այնպիսի ծնողներ եւ հաւարակու-
թեան այնպիսի անդամներ, որոնք ոչ թէ միայն չեն օգներ վարժա-
րանին, այլ պարզապէս կիմասեն՝ երբ, առանց ճշմարտութեան
վերահասու լինելու, միամտաբար եւ կամ անտարբերութեամբ
ձախող դատուղութիւններ կընեն և աննպաստ լուրեր կըտարածեն
Վարժարանին նկատմամբ, եւ այսպէս անոր հեղինակութիւնը
կըտկարացնեն աշակերտին առաջ, կրնայ չցաւիլ վարժարանը,
երբ կըտեսնէ այնպիսիներ, որոնք զարմանալի դիւրահաւանու-
թեամբ կանսան այն խօսքերուն, զորոնք այս կամ այն ծոյլ, ան
ազնիւ եւ ըմտստ աշակերտը իւր վատթարութիւնը Մածկելու և

կամ վերաորուած սխալ փառասերութիւնը գոհացնելու համար կտայթքէ վարժարանին դէմ: Իցէթէ երթալով պակսին Հայ հասարակութեան մէջ իրենց այդ անպատեհ վարմունքով վարժարանին ուղղակի կամ անուղղակի մնասող ծնողները կամ հասարակութեան անդամները, այն ատեն պակասած կըլինի նաեւ դաստիարակութեան փափուկ գործին ծանր արգելքներէն մին:

Վաղեմի աւակերսներ: Վարժարանս ցարդ ունեցած է 73 ընթացաւարտներ և քանի մը կիսաւարտներ: Տեղեկագրիս նիւթ եղող տարուան մէջ այդ վաղեմի աշակերտներու վարած դործերուն կամ պաշտօններուն մասին կրնամք տալ հետեւեալ տեղեկութիւնները: Անոնցմէ Յը, իւշպէս վերը տեսանք, (Ռգնական-Ուսուցիչներ էին իրենց Սայր վարժարանին մէջ, Կը Տնօրէն-Դասատու էր Բինկեանի ազգային վարժարանին մէջ, իրը 20 հոգի ուսուցչական պաշտօն կը վարէին Տրապիզոնի, Կարնոյ, Վանի, Լրզնակեանի, Բարերդի, Սերաստիոյ և սյլ քաղաքներու ազգային վարժարաններու մէջ, Կը Իւրոպայի գիտական, արհեստական և գեղարուեստական բարձրագոյն Հաստատութիւններու մէջ կը պարապէին մէկմէկ մասնագիտութեամբ: մնացեալները կը պարապէին առևարական և արհեստական գործերով, կամ իրրև գործի տէր և կամ իրրև օգնական իրենց ծնողներուն ու ազգականներուն:

Վարժարանիս վարիչներն և ուսուցիչները հայրական գորովով հեռուէն կհետեւին միշտ երենց այդ սաներուն ամենմէկ քայլին, եւ ուրախ պիտի լինին միշտ եթէ անոնք ամենքն եւս երբէք մտքէ չհանելով երենց մտաւորական բազմբախտ մայրը չըլանան ատեն ատեն տեղեկութիւններ հաղորդել անոր իրենց վիճակին ու գործունէութեան մասին:

Կարիև, 94-95 վարժ. տարուան սկիզբը:

Անգամ Յնչուրեան Սամասրեան

Վարժարանի

ՍԱՐԳԻՍ ՍՈՂԻԵՍԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1- երևակալական Տեղեկագիր երես 3

Համեմատական ցուցակ նախատեսուած եւ	
իրապէս եղած Մից	» 11
Համեմատական » « եւ	
իրապէս եղած Եից	» 13
Համեմատական » միամեայ ծախուց մէն	
մի աւակերսի համար	» 19

2- Ռաուանական Տեղեկագիր

I. Ռաուանական կազմակերպութիւն

Ա. Պարտաւորիչ առարկաներ եւ այլն	երես 20
Բ. Ռաուանիչ եւ իրենց շարքական դասեր	» 21
Գ. Կամաւոր առարկաներ	» 23
Դ. Ռաուանիչներու տուած եւ պակասած դասե-	

րու գումարները » 24

II. Տնակարգ 25

III. Աւակերներ

Ա. Փոփոխութիւններ տարեմի առթիւ	» 26
Բ. Ցանկ աւակերներու	» 27
Գ. Վիճակագրական ցուցակ	» 30
Դ. Աւակերներու Բնակավայրեր	» 30
Ե. Ընթացաւարներ	» 31

IV. Արհեստանոց » 32

V. Ռաուանական Միջոցներ » 33

VI. Վարժարանի Պատմութենէն » 34



THE UNIVERSITY OF CHICAGO

1	Introduction
2	Chapter I
3	Chapter II
4	Chapter III
5	Chapter IV
6	Chapter V
7	Chapter VI
8	Chapter VII
9	Chapter VIII
10	Chapter IX
11	Chapter X
12	Chapter XI
13	Chapter XII
14	Chapter XIII
15	Chapter XIV
16	Chapter XV
17	Chapter XVI
18	Chapter XVII
19	Chapter XVIII
20	Chapter XIX
21	Chapter XX
22	Chapter XXI
23	Chapter XXII
24	Chapter XXIII
25	Chapter XXIV
26	Chapter XXV
27	Chapter XXVI
28	Chapter XXVII
29	Chapter XXVIII
30	Chapter XXIX
31	Chapter XXX
32	Chapter XXXI
33	Chapter XXXII
34	Chapter XXXIII
35	Chapter XXXIV
36	Chapter XXXV
37	Chapter XXXVI
38	Chapter XXXVII
39	Chapter XXXVIII
40	Chapter XXXIX
41	Chapter XL
42	Chapter XLI
43	Chapter XLII
44	Chapter XLIII
45	Chapter XLIV
46	Chapter XLV
47	Chapter XLVI
48	Chapter XLVII
49	Chapter XLVIII
50	Chapter XLIX
51	Chapter L
52	Chapter LI
53	Chapter LII
54	Chapter LIII
55	Chapter LIV
56	Chapter LV
57	Chapter LVI
58	Chapter LVII
59	Chapter LVIII
60	Chapter LIX
61	Chapter LX
62	Chapter LXI
63	Chapter LXII
64	Chapter LXIII
65	Chapter LXIV
66	Chapter LXV
67	Chapter LXVI
68	Chapter LXVII
69	Chapter LXVIII
70	Chapter LXIX
71	Chapter LXX
72	Chapter LXXI
73	Chapter LXXII
74	Chapter LXXIII
75	Chapter LXXIV
76	Chapter LXXV
77	Chapter LXXVI
78	Chapter LXXVII
79	Chapter LXXVIII
80	Chapter LXXIX
81	Chapter LXXX
82	Chapter LXXXI
83	Chapter LXXXII
84	Chapter LXXXIII
85	Chapter LXXXIV
86	Chapter LXXXV
87	Chapter LXXXVI
88	Chapter LXXXVII
89	Chapter LXXXVIII
90	Chapter LXXXIX
91	Chapter LXXXX
92	Chapter LXXXXI
93	Chapter LXXXXII
94	Chapter LXXXXIII
95	Chapter LXXXXIV
96	Chapter LXXXXV
97	Chapter LXXXXVI
98	Chapter LXXXXVII
99	Chapter LXXXXVIII
100	Chapter LXXXXIX
101	Chapter LXXXXX



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0313292

1772
361



Ի ԿԱՐԻՆ



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ՅԱՅՏԱԳԻՐ 1891-92 ԱՌՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԱՆ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ Գրչերօթիկ վարժարանը ներկայ ուսումնական տարուան վերջը իւր անդրանիկ ընթացատարները Ազգին ընծայելէ յետոյ՝ առաջիկայ Սեպտեմբերին կրանայ վերադին Հայ մանուկներուն առաջ իւր զունքը, որոնք քանի մը տարիէ ի վեր փակուած էին տեղի անձկութեան պատճառաւ։ Վարժարանին համար սգալի դէպք մ'էր իւր Հիմնադիր-Բարերարին վաղահաս մահը, սակայն Տեսչութիւնը լի միտքարութեամբ կ'այտարարէ թէ մեծայշատակ Բարերարը իւր կտակով կատարելագոյն ապահոված է իւր ձեռակերտին ապագան։

Վարժարանին ուսմանց ծրագիրը, որ կ'համապատասխանէ Գերմանացոց Միջնակարգ Վարժարաններուն ծրագրին, կ'ընկայ անփոփոխ, միայն թէ նախակրթական երկու ստորին դասարանները չեն բացուիր, որով վարժարանը կունենայ եօթնամեայ շրջան, այն է մէկ նախապատրաստական եւ վեց վարժարանական դասարաններ, իւրաքանչիւրը մէկ տարուան ընթացքով։

Աւանդելի ուսմունքներն են.

1. Կրօն, 2. Հայերէն Աւսարհարար եւ Գրքար, 3. Տանկերէն, 4. Գերմաներէն, 5. Գաղղիերէն, 6. Անգղիերէն (կամաւոր), 7. Պատմութիւն, 8. Աւսարհագրութիւն, 9. Բնական գիտութիւն, 10. Առողջական գիտութիւն, 11. Գեղագրութիւն, 12. Գծագրութիւն, 13. Մեզ, 14. Գաւնակ եւ Ջութակ (կամաւոր), 15. Մարմնագր եւ գործնական պարապմունք, 16. Արհեստներ (կամաւոր)։

Որովհետեւ Սանասարեան Վարժարանը նպատակ ունի ոչ թէ միայն ընդհանուր կրթութիւն մատակարարել իւր խնամոց յանձնուած աշակերտներուն, այլ նաեւ սպրուտի որոշ միջոց տալ նոցանէ փափաքողներուն ձեռքը, այդ պատճառաւ յատուկ ուշադրութիւն ընծայուած է արհեստական բաժնին, ուր առ այժմ կուսանդուին երկաթագործութիւն եւ հիւսնութիւն իրենց ճիւղերով։ Իւրաքանչիւր երկաթագործ պարտաւոր է ուսանիլ գարրութիւն, կոպղարարութիւն եւ (երկաթի) ճախարակագործութիւն, եւ իւրաքանչիւր հիւսն՝ կահագործութիւն, ասաղձագործութիւն եւ (փայտի) ճախարակագործութիւն։

Աշակերտը կրնայ առնել կամաւոր առարկաներէն միայն մէկը, այսինքն՝ կամ Անգլիերէն, կամ Գաղղիերէն, կամ Ջութակ, կամ Երկաթագործութիւն եւ կամ Հիւսնութիւն, իսկ ընտրութիւնը կը կատարէ Տեսչութիւնը՝ ի նկատի առնելով ծնողաց փափաքը եւ աշակերտին ընդունակութիւնը։

Առաջիկայ վարժարանական տարեգլխին ընդունուելիք Զրիւզարտ աշակետք արդէն ընտրուած են զանազան կողմերէ առաջարկեալ բազմաթիւ ազայոց մէջէն։

Թողակաւոր աշակերտներ կ'ընդունուին հետեւեալ պայմաններով.

1. Ընդունուելիք աշակերտը պէտք է լինի 10—12 տարեկան։
2. Ընդունուելիք աշակերտը աւելուազն գիտնալու է Հայերէն վարժ կարդալ եւ գրել եւ թուարանութեան շորս գործողութիւնները։
3. Ընդունուելիք աշակերտը պէտք է բերէ իւր հետ ծնողեան ու մկրտութեան եւ պատուաւորն ու առողջութեան վկայականներ, ինչպէս նաեւ Օսմանիի քեզիտէսի։

4. Իւրաքանչիւր աշակերտ պէտք է վճարէ

Մուսի միամուսազ սուրճ	3 Օսմ. ոսկի
Յարեկամ բոսակ	20 » »
Կամուսուր առարկայի սուրճ	5 » »

ՄԱՆ. — Մուսքի միամուսազ սուրճը կը պարունակէ աշակերտին սկզբնական պիտոյից վերաբերեալ ծախքերը. սարեկան Յոշակը՝ աշակերտին սնունդի, հագուստի, լուսացի ու մարումնան, բժշկի ու փոյի, ուսման, դասադրերու եւ այլ ուսումնական պիտոյից ծախքերը, եւ կամուսուր առարկայի սուրճը՝ ուսուցչի, գործիրի, նիւթի եւ դասադրերու ծախքերը.

Ակնբոււ է Քէ սարեկան Յոշակի գումարը չի բաւեր տնտեսական զոցելու աշակերտին բոլոր ծախքերը, այլ այդ պակասը կը լրացուի Հոգեւոյն Հիմնադրին կապակայ եկամուտներէն:

5. Բոլոր վճարմունք պէտք է տեղի ունենան տարեգլխին (Սեպտեմբեր 1 էն մինչեւ 15), իսկ այն ծնողք, որոնց համար այդ դժուար է, կրնան Տեւալթիեան յատուկ դիմում ընելով գիւրութիւն ստանալ երկու ամսամէն վճարելու հետեւեալ կերպով. տարեկան թոշակի կէսը եւ կամուսուր ստարկայի տուրքը, ինչպէս նաեւ մուսքի տուրքը եւ պահեստի գումարը՝ (Տես թիւ 6) Սեպտեմբեր 1 էն մինչեւ 15, իսկ տարեկան թոշակի միւս կէսը, ինչպէս նաեւ ամառնային արձակուրդի տուրքը (Տես թիւ 8) Մարտ 1 էն մինչեւ 15:

6. Իւրաքանչիւր ծնողք պարտաւոր է՝ Վարժարանին յանձնել 3 Օսմ. ոսկույ պահեստի գումար մը, որպէս զի անով Հոգացուի նորա զուակին ճանապարհի ծախքը, երբ Տեւալթիւնը որ եւ է պատճառաւ Վարժարանէն արձակէ զնա, եւ կամ ցոյց տալ քաղաքին մէջ անձ մը, որ յանձն առնէ ի հարկին ետ ուղարկել նորա զուակը՝ Հոգաւով ամեն ծախքերը: Պահեստի գումարը ետ կը տրուի, երբ աշակերտը շնչէ Վարժարանէն:

7. Եթէ աշակերտը տարուան ընթացքին մէջ որ եւ է պատճառաւ Հանուի կամ բացակայ լինի Վարժարանէն, եղած վճարումները չեն կրնար ետ պահանջուիլ:

8. Ամառնային արձակուրդին, որ կսկսի Յուլիսի կէսին եւ կը տեւէ մինչեւ Սեպտեմբերի 15ը, ծնողք, եթէ ուզեն, կարող են տուն ասնել իրենց զուակները, ըսոյց երթեւեկութեան ծախքն ու Հոգը իրենց վրայ է: Իսկ Վարժարանը մնացող աշակերտք պարտաւոր են արձակուրդի երկու ամիսներուն համար վճարել 3 Օսմ. ոսկի:

Արձակուրդի ժամանակամիջոցին մէջ օգտօգուութեան եւ շրջապայութեան միջոցաւ յատկապէս Հոգ կը տարուի աշակերտաց մարմնական կազդուրման՝ առանց զանց ընելու նոցա ուսումնական զբաղումները:

ՄԱՆ. — 1891—92 ուսումնական տարին առաջ ընդունուած աշակերտք ազատ են ամառնային արձակուրդի սուրքէն:

9. Աշակերտաց մուսքը տեղի կունենայ Սեպտեմբեր 1 էն մինչեւ 15. Աշակերտ տալ ցանկացող ծնողք կամ խնամակալք պէտք է կանխաւ բանակցին Տեւալթիեան հետ, եւ նորա հաւանութիւնը առնելէ յետոյ ուղարկեն իրենց աղայքը:

ՏԵՄԵՆՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

Կարին, Ապրիլ 1891

Վարժարանին վերաբերեալ նամակներ պէտք է ուղղուին

ԱՆ ՏԵՄԵՆՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ

ԿԱՐԻՆ

ارضرومده سانسالهاجان مکتبی مدیریتہ

Direction du Collège Sanassarean

Turquie d'Asie

ERZEROUM

